Արձանագրություն N 1

ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի նիստի

03 հոկտեմբերի 2017թ

ք. Երևան

սկիզբը՝ ժամը՝ 14:00-ին

ավարտը՝ ժամը 15:35-ին

Մասնակցում էին՝

խորհրդի անդամներ.

Ա.Թարվերդյան՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ռեկտոր

Ա. Ոսկանյան՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ագրարային քաղաքականության և խորհրդատվության ամբիոնի վարիչ

Հ.Ջավադյան՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի «Ագրոբիզնես և շուկայաբանություն» ֆակուլտետի դեկան

Գ.Սարդարյան՝ «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամի տնօրեն

Վ.Համբարձումյան՝ «Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության նախագահ

Ս. Ավդալյան՝ «Երիտասարդ եզդիներ» հասարակական կազմակերպության նախագահ

Ա.Ղազանչյան՝ «Զարգացման սկզբունքներ» հասարակական կազմակերպության նախագահ

Ֆ.Աշիկյան՝ «Էկո-Գլոբ» բնապահպանական հասարակական կազմակերպության փոխնախագահ

Ե. Թարվերդյան՝ Հայաստանի պահածոյագործների և հյութարտադրողների միության նախագահ

Ա.Հարությունյան՝ Հայաստանի գինեգործների միության նախագահ

Հ.Հովհաննիսյան՝ «Հայկական պտղատնկարանների ասոցիացիա» գյուղատնտեսական հասարակական կազմակերպության նախագահ

Հ. Ջհանգիրյան՝ Հայաստանի Հանրապետության ագրոարդյունաբերողների համակարգի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ

Ս.Ստեփանյան՝ Հայաստանի Հանրապետության թռչնաբույծների միության նախագահ

Ա. Բիլյան՝ «Մսամթերք արտադրողների միություն» իրավաբանական անձանց միության նախագահ

Ա. Իսկոյան՝ «Շրջակա միջավայրի իրավական պահպանության կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ

Վ.Ղազարյան՝ «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» հասարակական կազմակերպության նախագահ

Հարգելի պատճառներով բացակայում էին՝

Ա. Գրիգորյան՝ «Հայկական կոնյակագործների միություն» իրավաբանական անձանց միության նախագահ՞

Ռ. Ծառուկյան՝ «Մուլտի Ագրո» գիտարտադրական կենտրոն ՍՊԸ

Ա. Գոմկցյան՝ «Օքսֆամ» հայաստանյան մասնաճյուղի գյուղատնտեսության ծրագրերի պատասխանատու

Վ.Ուռուտյան՝ «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն

Ն. Մանուկյան՝ «Արենի» փառատոն» հիմնադրամի տնօրեն

Հրավիրված էին՝

Ա. Պետրոսյան՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարի խորհրդական

Ա.Սմբատյան՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարի մամուլի քարտուղար

Ս.Սիմոնյան՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ

Օրակարգ

1. ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից 2017 թվականին մշակված գյուղոլորտի զարգացմանն ուղղված նոր ծրագրերի ներկայացում:

(Զեկուցող՝ ՀՀ գյուղատնտեսության նախարար, ՀՀ ԳՆ հասարակական խորհրդի նախագահ Իգնատի Առաքելյանը)

Նիստի սկզբում բացման խոսքով հանդես եկավ ՀՀ գյուղատնտեսության նախարար, հասարակական խորհրդի նախագահ **Ի. Առաքելյանը**:

Նախարարը նշեց, որ վերլուծվել են նախկինում իրականացված բոլոր ծրագրերը, հաշվի են առնվել առկա խնդրահարույց հարցերը, նոր ծրագրերը մշակելիս նախապես քննարկումներ են կազմակերպվել շահագրգիռ կողմերի հետ, որի արդյունքում որոշում է կայացվել նշաձողը փոքր-ինչ բարձրացնել և նոր ծրագրերի միջոցով զարգացման հնարավորություն ընձեռել գյուղացիական տնտեսություններին և ֆերմերներին՝ նրանց տրամադրելով մատչելի ֆինանսական ռեսուրսներ և նորագույն տեխնոլոգիաների ներդրման շահավետ հնարավորություններ:

Այնուհետև նախարար **Ի. Առաքելյանը** հանգամանորեն ներկայացրեց ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից 2017 թվականին մշակված գյուղոլորտի զարգացմանն ուղղված նոր ծրագրերը (պրեզենտացիան կցվում է):

Նախարարը մասնավորապես անդրադարձավ Գյուղացիական տնտեսություններին տրամադրվող սուբսիդավորվող մատչելի վարկերի, Գյուղատնտեսական հումքի մթերումների նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման, «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության» «Կարկտապաշտպան ցանցերի ներդրման պետական աջակցության», «Գյուղատնտեսության ոլորտում կաթիլային ոռոգման համակարգի ներդրման» և «Նորագույն տեխնոլոգիաներով հագեցած ինտենսիվ այգիների հիմնման պետական աջակցության» ծրագրերի հիմնական գաղափարախոսության, արդեն մեկնարկած փորձնական ծրագրերի շրջանակում գրանցված ընթացիկ արդյունքներին:

Նշվեց նաև, որ գյուղատնտեսության ոլորտում կայուն զարգացման ապահովման նպատակով մինչև տարեվերջ քննարկման կներկայացվի տոհմաբուծության զարգացման ծրագիրը, որը մշակվում է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի մասնագետների հետ, ինչպես նաև քայլեր են ձեռնարկվում օրենսդրական դաշտի բարելավման ուղղությամբ. մշակման փուլում է «Գյուղատնտեսության մասին օրենքի» նախագիծը:

Զեկույցի վերաբերյալ առաջարկություններ և հարցեր ներկայացրեցին **Ա. Ոսկանյանը, Ա. Հարությունյանը, Ա. Թարվերդյանը, Վ. Համբարձումյան, Ս. Ստեփանյանը, Ե. Թարվերդյանը, Վ. Ղազարյանը, Ա. Ղազանչյանը, Ա. Իսկոյանը:**

Ա. Ոսկանյան՝

-Իրականացվելու է արդյո՞ք վերահսկողություն պետական աջակցության ծրագրերի ընթացքի նկատմամբ՝ չարաշահումները բացահայտելու և կանխելու նպատակով:

Պաշտոնական մեկնաբանություն. Այո, պայմանավորվածություն է ձեռք բերվել Հայաստանի գյուղատնտեսական դաշինքի հետ ուսումնասիրություններ իրականացնելու վերաբերյալ, որոնց արդյունքները նաև կիրապարակվեն՝ ծրագրերի թափանցիկությունն ու հաշվետվողականությունն ապահովելու, կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու նպատակով:

-Ինչպիսի՞ն է լինելու վերաբերմունքը փոքր գյուղացիական տնտեսությունների նկատմամբ, քանի որ դրանք մեծ թվաքանակ ունեն և մեր երկրի գյուղատնտեսությունում ֆոն են ձևավորում:

Պաշտոնական մեկնաբանություն. Փոքր գյուղացիական տնտեսություններին առաջարկվող միակ տարբերակը խոշորացումն է, մենք խրախուսում ենք նրանց միավորվել, կոոպերատիվներ ստեղծել: Հայաստանի շուկան շատ փոքր է, իսկ արտահանման պարագայում պատվիրատուները նախընտրում են աշխատել խոշոր տնտեսությունների հետ, ուստի այս տարբերակը փոքր տնտեսությունների համար այլընտրանք չունի:

Ա. Հարությունյան՝

- Գյուղացիական տնտեսություններին տրամադրվող սուբսիդավորվող մատչելի վարկերի ծրագրի շրջանակում հանրապետության բարձր լեռնային համայնքների համար նույնպես սահմանել վարկի ձեռքբերման 3 % տոկոսադրույք:

Պաշտոնական մեկնաբանություն. Առաջարկությունն ընդունվել է ի գիտություն և կքննարկվի:

-Արդյո՞ք մրցակցության խաթարում չէ, երբ գյուղացիական տնտեսություններին տրամադրվող սուբսիդավորվող մատչելի վարկերը տրամադրում են միայն երկու ֆինանսական կառույց՝ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ»-ը և «Քարդ Ագրոկրեդիտ» ՈՒՎԿ-ն:

Պաշտոնական մեկնաբանություն. Ծրագիրը բաց է բոլոր ֆինանսական կառույցների համար, նրանց հետ հանդիպումներ են կազմակերպվել Գյուղատնտեսության նախարարությունում, ՀՀ վարչապետի մոտ, բոլորին առաջարկություն է արվել մասնակցել ծրագրին, սակայն այս պահի դրությամբ դիմել են միայն երկու կառույց, որոնց հետ էլ կնքվել են համագործակցության հուշագրեր:

-Վերամշակող ընկերությունների հետ պայմանագրեր կնքած գյուղացիներից շատերը փոխկապակցված են այլ անձանց հետ, որոնց հաշիվները կալանքի տակ են, և «Գյուղատնտեսական հումքի մթերումների նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման ծրագրի շրջանակում» գումարը հնարավոր չի լինում փոխանցել այն գյուղացուն, որից բերք է գնվել, քանի որ ԴԱՀԿ-ից պահանջում են գումարն ուղղել փոխկապակցված անձանց: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ միջոցներ ձեռնարկել, որպեսզի ծրագրի շրջանակում փոխանցվող գումարների առնվազն 60 % -ը չգանձվի համապատասխան մարմինների կողմից:

Պաշտոնական մեկնաբանություն. Խնդիրը կքննարկվի ՀՀ արդարադատության նախարարության հետ:

Ա. Թարվերդյան՝

-Որևէ սահմանափակում նախատեսվա՞ծ է Գյուղացիական տնտեսություններին տրամադրվող սուբսիդավորվող մատչելի վարկերից օգտվելու համար առ այն, որ նա պետք է զբաղվի գյուղատնտեսության որոշակի ճյուղով, թե այն նախատեսված է բազմաճյուղ գործունեություն ծավալելու համար:

Պաշտոնական մեկնաբանություն. Այս տարի որևէ սահմանափակում դրված չէ, սակայն քննարկվում է հետագայում վարկավորումը թիրախավորված ուղղություններով իրականացնելու հարցը:

Վ. Համբարձումյան

- Գյուղացիական տնտեսություններին տրամադրվող սուբսիդավորվող մատչելի վարկեր տրամադրել այն տնտեսություններին, որոնք ունեն փորձ, կոմերցիալիզացված են և կարող են արդյունք ապահովել, որովհետև շատ հաճախ գյուղացին վարկ ծախսել չգիտի: Սա հնարավորություն կտա համայնքում ստեղծել 5-6 օրինակելի տնտեսություններ, և նրանց տեսնելով՝ մյուսները նույնպես կուզենան այդ դրական փորձը փոխառել:

Պաշտոնական մեկնաբանություն. Մոտեցումն ընդունելի է և կիրառվում է:

_Գյուղացիական տնտեսությունների կոոպերացումն անհրաժեշտ է իրականացնել ոչ թե հողերի խոշորացման, այլ խնդիրների միավորման շուրջ, որից մեկը կարող է լինել իրացումը: Այս պարագայում նրանք շահագրգռված կլինեն միավորվել, քանի որ մրցակցայինից անցում են կատարում համագործակցային դաշտի:

Պաշտոնական մեկնաբանություն. Մոտեցումն ընդունելի է և կիրառվում է:

- Գյուղատնտեսական հումքի մթերումների նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման ծրագրի շրջանակում վարկերը տրամադրել մթերումից մեկ տարի առաջ, այն պայմանով, որ վերամշակողները գյուղացուն կանխավճար տրամադրեն:

- *Պաշտոնական մեկնաբանություն.* Գաղափարն ընդունելի է, սակայն այս պահին շուկան դեռևս պատրաստ չէ դրան, քանի որ փորձը ցույց է տալիս, որ գյուղացիները հրաժարվում են նախօրոք կնքված պայմանագրերից, երբ մթերման սեզոնին շուկայում ավելի բարձր գին է ձևավորվում, քան ֆիքսված է պայմանագրում:

Ս. Ստեփանյան

- Արդյո՞ք Գյուղացիական տնտեսություններին տրամադրվող սուբսիդավորվող մատչելի վարկերի ծրագիրը ենթադրում է ներգրավել նաև գյուղապետերին՝ որպես մասնակիցներ, հաշվի առնելով այն հանգամանքը, որը նրանց դերը համայնքում որոշիչ է:

Պաշտոնական մեկնաբանություն. Գյուղապետերը որևէ մասնակցություն չունեն ծրագրում, և եթե կան դեպքեր հավաստագրերի տրամադրման, կամ այլ հարցերում այս կամ այն կերպ նրանց կողմից միջամտություն իրականացնելու մասին, ապա անհրաժեշտ է տեղեկացնել ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը, որպեսզի համապատասխան քայլեր ձեռնարկվեն:

Ե. Թարվերդյան

-Խորհրդատուներ հրավիրել արտասահմանից, որպեսզի մեր երկրում բերքահավաքի ավտոմատացման աշխատանքներ կազմակերպվեն, քանի որ կա աշխատուժի պակաս, և բերքը մնում է դաշտում հավաքող չլինելու պատճառով:

Պաշտոնական մեկնաբանություն. Մոտեցումն ընդունելի է:

-Պետական աջակցության լիզինգային ծրագրի շրջանակում նաև վերամշակման սարքավորումներ տրամադրել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանց մեծ մասը մաշված է:

Պաշտոնական մեկնաբանություն. Ծրագիրն արդեն մշակման փուլում է:

Վ. Ղազարյան

-Հանրապետությունում կա աշխատուժի ապակենտրոնացում, անհրաժեշտ է ստեղծել սեզոնային աշխատուժի բազա խնդիրը լուծելու նպատակով:

Պաշտոնական մեկնաբանություն. Գաղափարը լավն է, ենթակա է քննարկման:

- Գյուղատնտեսական հումքի մթերումների նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման ծրագրում շատ է թղթաբանությունը, անհրաժեշտ է ավելի ճկուն դարձնել գործընթացը:

Պաշտոնական մեկնաբանություն. Ծրագրում թղթաբանությունը նպատակային է ավելացվել, որպեսզի հնարավոր սողանցքները վերացվեն, և գումարը հասնի գյուղացուն, սակայն հետագայում հարցը կքննարկվի:

-Այս ծրագրերն աննախադեպ են, և վստահաբար շոշափելի արդյունքներ կտան, սակայն ստեղծվում է անհավասար մրցակցային դաշտ այն ընկերությունների համար, որոնք մինչև այս ծրագրերի մեկնարկն են սարքավորումներ ձեռք բերել ոչ շահավետ պայմաններով:

Պաշտոնական մեկնաբանություն. Նման հարցադրում մշտապես կարող է առաջանալ, սակայն ծրագրերն անհրաժեշտ են և ինչ-որ ժամանակ անհրաժեշտ էր սկսել: Նշված ընկերությունները՝ որպես լուծման տարբերակ, կարող են քննարկել գույքի վաճառքի և նոր գույքի ձեռքբերման արդյունավետության հարցը:

-Արդյո՞ք ճիշտ է ձևակերպված «Գյուղատնտեսության ոլորտում կաթիլային ոռոգման համակարգի ներդրման» ծրագրի նախագծի վերնագիրը, եթե հաշվի առնենք, որ այն ընդգրկում է երկրորդային ջրամատակարարման ամբողջ համակարգը, որի մեջ կարող է մտնել ասենք, ջրամբարների կառուցումը:

Պաշտոնական մեկնաբանություն. Ծրագիրը ներառում է երկրորդային ջրամատակարարման ամբողջ համակարգը, այդ թվում՝ ջրամբարների կառուցումը, եթե անհրաժեշտություն առաջանա, կարող ենք խմբագրական փոփոխություն կատարել:

Ա. Ղազանչյան

- Ֆինանսական կառույցները գյուղացիական տնտեսություններից գրավ պահանջու՞մ են սուբսիդավորվող վարկերի տրամադրման դիմաց:

Պաշտոնական մեկնաբանություն. Մինչև 3 մլն դրամ գումարը նախորդ ծրագրի շրջանակում տրամադրվել է երաշխավորությամբ, այժմ բանակցություններ են ընթանում, որպեսզի գումարի չեմը բարձրացվի:

-Պրեզենտացիայի կարգախոսը՝ «Բարեփոխենք գյուղատնտեսությունը՝ բարելավելով կյանքեր» փոխարինել «Բարեփոխելով գյուղատնտեսությունը՝ բարելավենք կյանքեր» արտահայտությամբ:

Պաշտոնական մեկնաբանություն. Կարծիքը հաշվի կառնվի:

Ա. Իսկոյան

-Արդյո՞ք ինտենսիվ այգիների բերքը չի պարունակում ԳՄՕ:

-*Պաշտոնական մեկնաբանություն.* Ինտենսիվ գենետիկական այգիները որևէ առնչություն չունեն ԳՄՕ-ի հետ, դրանք բացարձակապես անվնաս են, գաճաճ, արագ բերքատու տնկիներ են, որոնք միևնույն ժամանակ շատ կարճ կյանք ունեն: (Հարցի շուրջ մեկնաբանություններ ներկայացրեցին նաև **Ա. Թարվերդյանը**, **Ա. Ոսկանյանը** և **Հ. Հովհաննիսյանը**՝ հաստատելով վերոնշյալ պնդումը):

Նիստի ավարտին քվեարկության դրվեց ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից 2017 թվականին մշակված գյուղոլորտի զարգացմանն ուղղված նոր ծրագրերին հավանություն տալու մասին հարցը:

ՄԻԱՁԱՅՆ ՈՐՈՇՎԵՑ.

1. **Հավանություն տալ ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից 2017 թվականին մշակված գյուղոլորտի զարգացմանն ուղղված նոր ծրագրերին:**

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ի. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ
ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ **Ս. ՍԻՄՈՆՅԱՆ**